ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1957 Общественные науки

Հ. Եգանյան

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂ

Կապիտալիզմի զարգացումը Իրանում տեղի է ունենում գյուղում ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների գերիշխման պայմաններում, որը տանում է դեպի գյուղատնտեսության խորը ճգնաժամ։ Ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների և կապիտալիզմի միջև եղած հակասությունները հանդիսանում են ոչ միայն գյուղատնտեսության, այլև Իրանի ամբողջ տնտեսության խոր ճգնաժամի հիմքը։ Գյուղատնտեսության մեջ այդ ճգնաժամը արտահայտվում է ցանքատարածությունների կրճատման, բերքատվության չափազանց ցածր մակարդակի, հողի և աշխատող անասունների հյուծվածության, երկրի գյուղատնտեսության ընդհանուր դեգրադացիայի ու անկման, և այդ ամենի հետևանքով գյուղացիական հոծ մասսաների շահագործման ուժեղացման ու նրանց ծայրահեղ աղքատացման մեջ։

Ինչպես հայտնի է, Իրանում գերիշխում են ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունները, բայց այդուհանդերձ կապիտալիզմը զարգանում է։ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հարցերը քննելիս Վ. Ի. Լենինը, նման տնտեսական հարաբերությունների առկայությունը նշելով, մի շարք հարցեր է դնում. զարգանում է արդյո՞ք ապրանքա-դրամային հարաբերությունները, գյուղացին վաճառում է արդյո՞ք իր պրոդուկցիան և ձեռք բերում իր կարիքները շուկայում, զարգանում է արդյո՞ք խոշոր տնտեսությունը, շերտավորվում է արդյո՞ք գյուղացիությունը որպես ֆեոդալական հասարակության միասնական դասակարգ։ Բնական է, որ այս հարցերի պատասխանը ցույց կտա, թե կապիտալիստական հարաբերությունները ինչպես են ներթափանցում իրանական գյուղ, որոնք են այդ ներթափանցման առանձնահատկությունները և այլն։

Հենց սկզբից անհրաժեշտ է նշել, որ այդ հարցերի պարզաբանումը դժվարին գործ է թեկուզ այն պատճառով, որ ժամանակակից Իրանում բացակայում է ստույգ, լրիվ և արժանահավատ վիճակագրություն։ Հետևաբար իրանական և օտարերկրյա առկա աղբյուրների հիման վրա կարելի է միայն նկարագրել ընդհանուր պատկերը, որը անշուշտ ամբողջական և լրիվ լինել չի կարող։

Իրանի կալվածատիրական տնտեսությունը, որի արտադրանքը նախկինում գերազանցապես ծառայում էր խաների, խոշոր կալվածատերերի և նրանց սպասարկուների պահանջների բավարարմանը, օտարերկրյա կապիտալի մուտքից հետո սկսեց արտադրել վաճառելու համար, թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում։ Սա արդեն գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնացման պրոցես էր, բայց դա դեռևս կապիտալիզմ չէր։

Մարքսը և Լենինը բազմիցս ընդգծել են, որ չնայած ագրարային հարաբերությունների մեջ միջնադարյան մնացուկները արգելակում են կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, այդուհանդերձ նրանք իրենց մեջ պարունակում են նման հարաբերությունների զարգացման հնարավորությունը։

Այս դեպքում մարքսիզմ-լենինիզմի կլասիկները սովորեցնում են, որ կապիտալիզմի զարգացման համար պետք են որոշակի պայմաններ, և միայն ապրանքային արտադրության առկայությունը բավական չէ։ Կապիտալիստական արտադրության համար, բացի զարգացած ապրանքային տնտեսությունից, անհրաժեշտ են նաև արտադրության միջոցների մասնավոր սեփականություն և այդ արտադրամիջոցներից զուրկ անմիջական արտադրողի կողմից իր աշխատուժի վաճառք։

Օտարերկրյա կապիտալի մուտքը Իրան բռնի կերպով խախտեց իրանական հասարակության ինքնուրույն զարգացումը։ Արտադրության կապիտալիստական եղանակի զարգացման ուղու հիմնական խոչընդոտը հանդիսացավ երկրի գաղութային շահագործումը. իմպերիալիստները աշխատում էին արհեստականորեն պահպանել ֆեոդալական սեփականությունը հողի նկատմամբ, այստեղից էլ՝ կալվածատիրական հարաբերությունների ամրացում և արդյունաբերության զարգացման արգելակում։

Օտարերկրյա իմպերիալիստները, շահագործելով Իրանը որպես ագրարային-հումքային բազա, ուժեղացնում էին նրա գյուղատնտեսության մասնագիտացումը (որի մասին կխոսենք քիչ հետո), նպաստում էին շուկայից անմիջական արտադրողների կախվածության աճմանը, ընդ որում ոչ միայն ներքին, այլ արտաքին շուկայից։ Այդ պրոցեսը հակասական բնույթ ուներ և որոշվում էր հետևյալ պայմաններով։ Իմպերիալիստները շահագրգռված էին որոշակի պայմաններում Իրանի գյուղատնտեսությունը վերածել ապրանքային տնտեսության, քանի որ դա անխուսափելի պայման էր Իրանը, որպես ագրարային-հումքային կցորդի, շահագործելու համար։ Միևնույն ժամանակ իմպերիալիզմը կոնսերվացնում էր ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունները գյուղում, և դրանով իսկ արգելակում պարզ ապրանքային տնտեսության վերաճումը կապիտալիստականի և արտադրական ուժերը դատապարտում էր քարացման ու անշարժության։ Դեռ ավելին, ֆեոդալական մնացուկների գերիշխումը (որի տնտեսական հիմքը հանդիսանում էր հողի նկատմամբ կալվածատիրական սեփականությունը), խոչընդոտ էր հանդիսանում ոչ միայն պարզ ապրանքային արտադրության ընդարձակ և ազատ վերածմանը կապիտալիստականի, այլ որոշ չափով նպաստում էր գյուղատնտեսության նատուրալ բնույթի պահպանմանը։ Այդ տեսակետից, բնորոշ է այն, որ գյուղացիները մինչև այսօր էլ կալվածատիրոջը վճարում են նատուրալ ռենտա, իսկ գյուղատնտեսական բանվորները՝ բատրակները, հաճախ աշխատավարձը ստանում են նատուրայով։ Մինչև իսկ, երբ գյուղացին վաճառում է արտադրանքի իր բաժինը, ապա այդ վաճառքը հաճախ տեղի է ունենում «նատուրալ» ձևով, քանի որ նա ստիպված է լինում իր բաժնի մի մասը տալ վաշխառուին և մեծագնորդին՝ ստացած սերմային ավանսի դիմաց։

Նախասկզբնական կուտակման տիպի առևտրական կապիտալը Իրանում, անմիջական արտադրողին արտադրության միջոցներից ընդհանրապես և հողից մասնավորապես, կտրելու կարևորագույն գործիքներից էր։ Այդ դերը նշանակալից չափով վերաբերում է և վաշխառուական կապիտալին։ Բայց դրանով չի սահմանափակվում առևտրական և վաշխառուական կապիտալի դերը, և դրա մեջ չի կայանում նրանց որոշիչ ֆունկցիան գաղութային և կախյալ երկրների պայմաններում։ Օտարերկրյա իմպերիալիզմի կողմից իրանական գյուղում ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների կոնսերվացիայի շնորհիվ,

առևտրական և վաշխառուական կապիտալը սերտորեն կապվում է ֆեոդալա-կալվածատիրական հողատիրության հետ և նրանից փոխ է առնում գյուղացիության կեղեքման և շահագործման միջնադարյան մեթոդները։ Պարտքային լուծը այսօր էլ հանդիսանում է կալվածատիրոջից և վաշխառուից, գյուղացու կիսաստրկական կախման պահպանման ամենատարածված ձևերից մեկը։

Վաշխառուն և մեծագնորդը, որոնք հաճախ հանդես էին գալիս մեկ դեմքով, նշանակալից չափով անմիջական արտադրողին մեկուսացրին շուկայից և արգելակեցին գյուղացիության մեծամասնությանը (չքավորին և մասամբ էլ միջակին) իրենց արտադրանքի բաժինը վաճառելու շուկայական գներով։

Այսպիսով, գյուղացիական լայն մասսաների արյուն քրտինքով հղփացող կալվածատերերի, սուբարենդատորների, մոբաշիրների, քեդխուդաների և այլ պարազիտային հսկա բանակին ավելանում են նաև գյուղի առևտրականները, շարշիները և հատկապես վաշխառուները։

Մշտական կարիքը գյուղացուն ստիպում է բերքահավաքից անմիջապես հետո վաճառել արտադրանքի իր բաժինը եթե դա արդեն վաճառված չէ նախապես։ Այդ նշանակում է, որ գյուղացին ստիպված է վաճառել կամ փոխանակել արտադրանքի իր բաժինը այն ժամանակ, երբ գները ցածր են։ Եվ եթե նրա ընտանիքի պաշարը սպառվում է ձմեռնամուտին, կամ ձմեռվա կեսերին, որը հաճախ է պատահում, ապա նա ստիպված է մթերքներ գնել, երբ գներն արդեն բարձրացել են։ Գյուղացին հաճախ բերքի իր բաժնի մի մասը փոխանակում է իրեն անհրաժեշտ շաքարի, թեյի, կամ էլ կտորի հետ։ Այդպիսի փոխանակությունը սովորաբար կատարվում է շարշիների կամ մանր առևտրականների միջոցով, որոնք գյուղ են գալիս մոտակա քաղաքներից, կամ էլ գյուղի խանութպանի հետ։ Բնական է, որ փոխանակումը լինում է ոչ գյուղացու օգտին, քանի որ այդ փոխանակողները, որոնք հաճախ տվյալ գյուղի մենաշնորհը իրենց ձեռքում են պահում, գյուղացու մթերքների գները նշանակում են իսկական գներից չափազանց ցածր։ Օրինակ, «էթթելաաթ» թերթը Ջիրաֆթի շրջանի գյուղերի մասին գրում է, որ «այս շրջանը բավականին հեռու է կենտրոնից և ուրիշ քաղաքներ էլ չկան մոտակայքում...։ Ինչպես երկրի բոլոր մյուս մասերում, այստեղ էլ շարշիները և առևտրականները գյուղացիների արտադրանքը ցածր գնով նրանց ձեռքից դուրս են բերում և փոխարենը արտակարգ թանկ գնով նրանց վաճառում են շաքար, թեյ, ծխախոտ և այլն։ Այդ դժբախտ գյուղացիները ո՛չ իրենց մթերքների գնի մասին են տեղյակ և ո՛չ էլ առևտրականների ապրանքների։ Եթե ոմանք էլ տեղյակ լինեն, ապա հնարավորություն ու միջոցներ չունեն ֆարսախներ ճանապարհ կտրել, որևէ քաղաք գնալ և իրենց ապրանքները փոխանակել»[1]։

Գյուղի առևտրականները, շարշիները և խանութպանները, գյուղացուն մշտական կախման մեջ են պահում իրենցից։ Ամերիկացի Ռ. Ն. Ֆրայը 1952 թ. հրատարակած իր մի գրքում այս կապակցությամբ նշում է, որ «միանգամայն սովորական երևույթ է գտնել ընտանիքներ, որոնք հավիտյան և անհույս պարտք ունեն կալվածատիրոջը»[2]։

Պարտք վերցնելու համար գյուղացին ստիպված է դիմել կամ մի որևէ վաշխառուի կամ էլ կալվածատիրոջը։ Վաշխառուն կարող է լինել հարևան քա-

[1] «[illegible]», 6 սեպտեմբերի, 1953։

[2] *V. T. Lewis and R. N. Frye.* The United States and Turkey and Iran. 1952. էջ 185։

գաքի որևէ առևտրական, որևէ շարչի, կամ գյուղի խանութպանը և, վերջապես, որևէ ուրիշ գյուղացի, որն այս կամ այն պատճառով ավելի բարենպաստ պայմաններում լինի։ Բայց, անկախ վաշխառուի ով լինելուց, տոկոսները միշտ էլ չափազանց բարձր են։ Տոկոսները նշանակվում են այսպես կոչված «ղրսթի» հիմունքով, որը հայտնի է որպես տասին տասներեք, կամ տասին տասնհինգ։ Օրինակի համար 10 ռիալ տրվում է 6 ամսով և հետ է դանձվում 13 կամ 15 ռիալ։ Տարեկան հիմունքներով հաշվելիս տոկոսները հասնում են 30, 50 կամ մինչև իսկ երբեմն 100 տոկոսի[1]։

Քաղաքի առևտրականները պարտքը տալիս են ոչ թե կանխիկ, այլ ապրանքով։ Այդպիսով նրանք կրկնակի օգուտ են քաղում՝ թանկ գներով վաճառում են իրենց ապրանքները և միաժամանակ տոկոսներ են ստանում։ Իրանի որոշ գյուղերում, հատկապես Քուրդիստանի գյուղերում, շրջիկ առևտրականները կամ շարչիները սովորաբար իրենց ապրանքները վաճառում են ընթացիկ բերքի դիմաց։

Հաճախ գյուղացին կարիքի մեջ լինելով ստիպված է լինում պարտք վերցնել հետևյալ պայմաններով. «Էթթելաաթ» պաշտոնական թերթը խոսելով Զանջանի շրջանի գյուղերի մասին գրում է. «Ռայաթները աղքատ են, և դրա համար էլ բերքահավաքից 2—3 ամիս հետո ոչ մի ուտելիք չեն ունենում և կալվածատիրոջ դուռն են ծեծում պարտք վերցնելու համար։ Կալվածատերերը, օրինակ, 50 կամ 100 ման ցորեն են տալիս, գինը որոշում, և բարձր գնով դրամական մուրհակ են վերցնում։ Խարվարը 100 թուման կամ ավելին գնահատված ցորենի գիմաց, բերքահավաքի ժամանակ, երբ գները բնականաբար ցածր են, մի խարվարի գիմաց 2—3 խարվար ցորեն են հետ ստանում»[2]։

Բայց գյուղում կապիտալի ներթափանցումը չի սահմանափակվում միայն վաշխառուների և մեծագնորդների գործունեությամբ։ Խոշոր առևտրական բուրժուազիան նույնպես հողեր ունի։ Իրանում մենք տեսնում ենք կալվածատերերի և խոշոր առևտրական բուրժուազիայի շահերի սերտաճման վառ օրինակը։ Իրանական գյուղացիության կեղեքումը տեղի է ունենում թե՛ կալվածատերերի և թե՛ առևտրա-վաշխառուական կապիտալի միջոցով, ընդորում «բանի դեռ առևտրային կապիտալն անզարգացած հասարակությունների արդյունքների փոխանակության գործում միջնորդի դեր է կատարում, առևտրային շահույթը երևան է գալիս ոչ միայն իբրև օգտաշորթում և խաբերայություն, այլ մեծ մասամբ հենց նրանից է ծագում»[3]։ Ֆեոդալա-կալվածատիրական դասակարգում նկատելի ձևով ավելանում է չինովնիկներից դուրս եկող կալվածատերերի թիվը, որոնք ձեռք բերած հողերում առևտրական հողագործություն են վարում։ Այս տիպի հողատիրությունը զարգացավ և աճեց երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում և երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին, բայց մի էական առանձնահատկությամբ, այն, որ նոր կալվածատիրական հողատիրությունը ամբողջապես և լիովին պահպանեց արտադրության ֆեոդալական եղանակը։ Այս նոր հողատերերը, առևտրական հողագործությունը իրականացնում են հին ֆեոդալական արտադրական հարաբերությունների հիման վրա, բայց միևնույն ժամանակ հանդես են

[1] *Raj Narain Gupta*, Iran, an economic study, New Delhi, 1947, էջ 62։
[2] «اطلاعات», 13 սեպտեմբերի, 1953։
[3] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս 1-ին, էջ 317։

դալիս որպես առևտրական բուրժուազիայի, նրա կոմպրադորական շերտի ներկայացուցիչ, քանի որ նրանք իրենց ձեռքում են կենտրոնացնում նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառումը արտաքին շուկայում։

* * *

Գյուղատնտեսության մեջ կապիտալի ներդրումը կատարվում է նաև հողագործական ընկերություններ ստեղծելու միջոցով։

Ներկայումս Իրանի համարյա բոլոր ծայրամասերում մեծ թվով ընկերություններ կան, որոնք զբաղվում են հողագործությամբ։ Այդ ընկերությունները հատկապես լայն աշխատանքներ են ծավալում Իրանի ամենահարուստ նահանգներից մեկում՝ Խուզիստանում։ Դեռևս 1935 թ. Ռիզա շահը մի օրենքով հող էր տալիս բոլոր այն անձանց, կամ ընկերություններին, որոնք պարտավորվում էին ջրապոմպեր օգտագործելով, ոռոգել հողը և մշակել այն։ Հողի քանակը սահմանվում էր ջրապոմպի միջոցով ոռոգվող հողամասի երկուս ու կես անգամ ավելի չափով։ Այդ հողերը դառնում էին մշակողի սեփականությունը, բայց նրանց փոխանցումը մի երրորդ անձնավորության առաջին երեք տարում պահանջում էր ֆինանսների մինիստրության թույլտվությունը։ Այդ օրենքը լայն կիրառում ստացավ Ռիզա շահից հետո, արդեն 1947 թ.։ «Խուզիստանում հողերի բաժանման» կանոնադրության մեջ ասվում էր. «այն իրանցիները կամ իրանական ընկերությունները, որոնք կցանկանան 1935 թ. օրենքի համաձայն հող մշակել Խուզիստանում, պետությունը իր հողերից նրանց անփոխարինելիորեն հող կտա, պայմանով, որ այդ հողերը մշակվեն և ոռոգվեն պոմպերի, կանալների և ամբարտակների միջոցով» (հոդված 1)։ Այնուհետև «դիմողներին սեփականության իրավունքով տրվելիք հողի չափը կլինի ամեն մի լիտր ջրի համար[1] երեք հեկտար, երեք հերթափոխման համար» (հոդված 10)։ 16-րդ հոդվածում ասվում է, որ «այն անձինը կամ ընկերությունները, որոնք այս կանոնադրության համաձայն հող են ձեռք բերում, իրավունք չեն ունենա փոխանցելու այդ հողերը, նախքան իրենց պարտականությունների կատարելը այդ հողերի նկատմամբ»։ Հետաքրքրական է նշել, որ սեփականության ձևափոխման և հողագործությամբ զբաղվող կապիտալիստական ընկերությունների առաջ գալու հետ չփոխվեց գյուղում գոյություն ունեցող հարաբերությունները։ Այդ մասին ընդգծվում էր մինչև իսկ օրենքում. «հողատերերը փոխանցված հողերում բնակվող գյուղացիների հետ պետք է վարվեն այդ շրջաններում իշխող կիսբրայինի սկզբունքով»[2]։ Դա նշանակում էր, որ գյուղացիների շահագործման ձևերը մնում էին նույնը, ինչ ֆեոդալա-կալվածատիրական հողերում։

1954 թ. Խուզիստանում, ինչպես հայտարարեց գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Մ. Զահեդին, գոյություն ունեին մոտ 100 գյուղատնտեսական ընկերություններ, որոնցից ամեն մեկն ուներ 2—7 պոմպ՝ 45—120 ձիաուժով։ Բացի այդ մասնավոր ընկերություններից, կան նաև պետական ընկերություններ[3]։ Այս ընկերությունների մասին որոշ տվյալներ է տալիս իրանա-

---

[1] Նկատի ունի ջրապոմպի կարողությունը։
[2] Bulletin of Bank Melli Iran, Teheran, № 91 (1947—1948), էջ 429։
[3] «اطلاعات», հունվարի 1954։

կան «էթթելաաթ» թերթը։ Խուզիստանում,— գրում է թերթը,— հիմնվել են նաև պետական գյուղատնտեսական ընկերություններ և իրենց տրամադրության տակ բավականին շատ հող ունեն, ինչպես, օրինակ, Խուզիստանի գյուղատնտեսական ընկերությունը (Շերքաթե Ֆալահաթիյե Խուզիստան شرکت فلاحتی خوزستان), որը պետական է և 15 տարուց ավելի է ինչ հիմնադրվել է։ Համիդիյե և Ահուդաշտ կոչվող հողամասերը նրա տրամադրության տակ են[1]։

«էթթելաաթ» թերթի հաղորդմամբ Խուզիստանում գոյություն ունի մի ուրիշ ընկերություն, որը կոչվում է «Հարավի գյուղատնտեսական ընկերություն» (Շերքաթե Ֆալահաթիյե Ջոնուբ شرکت فلاحتی جنوب), որը մեծ թվով բաժնետերեր ունի։ Այս ընկերությունը ցացի իրեն հատկացված 6 հազար հեկտար հողամասից, բավականին ուրիշ հողեր էլ է գրավել։

Այդպիսի ընկերություններ կան նաև Խորասանում։ Օրինակ՝ 30-ական թվականների վերջերին Խորասանում կազմվեց «Գյուղատնտեսական ընկերություն» (Շերքաթե Ֆալահաթի شرکت فلاحتی)։ Այդ ընկերությունը արենդով էր վերցրել Իմամ Ռիզայի սրբավայրին պատկանող վակֆային հողերը։ Բայց ընկերությունը իր գոյության երկար տարիները ոչնչով չարդարացրեց և լուծարքի ենթարկվեց 1948 թ.։ Այդ ընկերության մնացուկների հիման վրա մի նոր ընկերություն կազմակերպվեց՝ «Ռիզայի գյուղատնտեսական ընկերություն» (Շերքաթե Քեշավարզիե Ռիզա شرکت کشاورزی رضا) անունով, որը Մաշհադի շրջակայքում արենդով վերցրեց մոտ 20 կալվածք, որոնց թվում և Թորուգը, Շադքանը, Միհրանխանը և Խիաբանը։

1949 թ. Թորուգի հողերի դիմաց ընկերությունը սրբավայրին վճարում էր տարեկան մեկ միլիոն 200 հազար ռիալ և 100 խարվար հացահատիկ, որի 2/3-ը ցորեն էր 1/3-ը գարի։ Խիաբանում բացի յուրաքանչյուր ջուֆթի դիմաց վճարվող 20 հազար ռիալ կանխիկ դրամից, տրվում էր նաև 11 խարվար հացահատիկ, որի $^2/_3$-ը ցորեն և $^1/_3$-ը գարի էր[3]։

Գյուղատնտեսության մեջ ապրանքա-դրամային հարաբերություններին զարկ տալու համար, մասնավորապես տեխնիկական կուլտուրաների ցանքսերի ընդլայնման եղանակով, Իրանի կառավարությունը Ազգային բանկին կից, 1930 թ. օգոստոսի 31-ի օրենքով, հիմնեց «գյուղատնտեսական բաժին»[4]։ Այդ օրենքի չորրորդ հոդվածում պարզ կերպով սահմանվում էր, որ վարկերը բաց կթողնվեն միայն իրիգացիոն շինարարության և տեխնիկական կուլտուրաների ընդարձակման համար։ Վարկերը տրվում էին միայն «գրանցված անշարժ գույքի» երաշխավորություն ունենալու դեպքում։ Հենց այդ մի հոդվածը արդեն բացառում էր գյուղացիական մասսաների կողմից վարկ վերցնելու հնարավորությունը։ 1933 թ. հունիսի 14-ի օրենքով ստեղծվեց գյուղատնտեսական և արդյունաբերական ինքնուրույն բանկ, «երկրի գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման համար» (Sic)։ Ի տարբերություն վերոհիշյալ 1930 թ. օգոստոսի օրենքի, 1933 թ. օրենքի համաձայն բանկի խնդիրները ավելի ըն-

---

[1] «اطلاعات» 16 հունվարի, 1954։

[2] Նույն տեղում, 11 հուլիսի, 1953։

[3] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, էջ 235։

[4] Օրենսդրական 7-րդ նստաշրջանի սահմանած և վավերացրած օրենքների ժողովածու, Թեհրան, 1946 թ. (պարսկերեն), էջ 211—215։

դարձակվում էին։ Բանկի խնդիրներն էին ոչ միայն վարկեր բաց թողնել իրիգացիոն շինարարության և տեխնիկական կուլտուրաների ընդարձակման համար, այլ նաև անասնապահության զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համար։ Այդ վերջինի կապակցությամբ ասվում էր, որ վարկեր կտրվեն տեխնիկական կուլտուրաների ստեղծման, ընդլայնման և բարելավման համար, որպեսզի Իրանը ազատվի մի շարք տեխնիկական կուլտուրաների (թեյ և այլն) ներմուծումից, ընդարձակվի այլ տեխնիկական կուլտուրաների (բամբակ և այլն) արտահանումը և, վերջապես, ապահովվի ազգային արդյունաբերության կարիքները (ճակնդեղ, կանեփ և այլն)։ Քանի որ վարկերը դրվում էին անշարժ գույքի գրավականի դիմաց, ապա դա մատչելի էր միայն կալվածատերերին և գյուղի կուլակային վերնախավին։ Կրեդիտի չափը գրավական կալվածքի արժեքի 30 տոկոսից ավելի չպիտի լիներ, իսկ գնահատումն էլ կատարում էր բանկը (2-րդ հոդված)։ Կրեդիտ կարելի էր տալ և խորդենմալիքներին ու գյուղացիներին՝ գրանցված անշարժ գույքի գրավականով, նրա արժեքի 50 տոկոսի չափով, այն պայմանով, որ կրեդիտի գումարը 10.000 ռիալից ավելի չլիներ։ Այս բոլորը ցույց են տալիս, որ բանկը ստեղծվել էր հովանավորելու միայն կալվածատերերին և առևտրական բուրժուազիային։ Պետական վարկերի դոնորը փակելով գյուղացիական լայն մասսաների առջև, կառավարությունը պետական հողերի վաճառքի (1934 թ. օրենք) եկամուտները հատկացնում էր կալվածատիրական հողատիրության վարկավորումը ուժեղացնելու նպատակին։ Այդ ուղղությամբ կառավարության կողմից սահմանվեց 350 միլիոն ռիալ 10 տարվա համար։ Բնորոշ է այդ միջոցառումների պատճառաբանումը ժամանակի ազգային տնտեսության մինիստրի կողմից Մեջլիսում. «Չքավոր գյուղացիներ շատ կան,— ասում էր նա,— բայց կառավարությունը չի կարող նրանց օգնություն ցույց տալ։ Կառավարությունը կօգնի պիտանի և արժեքավոր կուլտուրաների զարգացմանը, բայց դրամական օգնություն են փնտրում նաև ցորեն և գարի ցանող անձինք։ Չքավոր գյուղացիներ Իրանում շատ կան, բայց մենք կօգնենք ոչ թե չքավորներին, այլ նրանց, որոնք կարող են ապահովել տնտեսության պրոգրեսը»։

1934 թ. բանկի օժանդակությամբ երկու ամբարտակներ կառուցվեցին Ֆարսի Մերվդաշտում և Գորգանում, Գիլանի ծխախոտագործներին վարկեր տրվեց 2 միլիոն ռիալի չափով, իսկ Ադրբեջանի հողագործներին մեկ միլիոնի չափով։ Ճակնդեղի ցանքսի զարգացման համար բանկը սերմեր բաժանեց և ավանս տվեց 450 ռիալի չափով ամեն մի ցանված ջարիբի դիմաց։

Համաշխարհային տնտեսական կրիզիսի հետևանքով Իրանի գյուղացիության ծայրահեղ քայքայումը և գյուղացիական մասսաների համատարած աղքատությունը գյուղատնտեսական բանկի համար հարմար պայմաններ ստեղծեց. գյուղացիներին «օգնելու» պատրվակի տակ, է՛լ ավելի թափանցել գյուղի գյուղ։ 1935 թ. գյուղատնտեսական բանկը սկսեց մասնակցել գյուղատնտեսական հատուկ ընկերությունների կազմակերպմանը։ Այդ ընկերությունների ծրագրի մեջ էր մտնում «անմիջական արտադրողից գնել գյուղատնտեսական արտադրանքը...»։

Թեհրանում կազմակերպված խոշորագույն ընկերությունը իր առաջ խնդիր էր դրել ոչ միայն արտադրողներից գնել նրանց արտադրանքը, այլև բաց անել գյուղական կրպակների մի ցանց, որտեղ գյուղացիները կրեդիտով կարո-

ղանային գնել լայն սպառման առարկաներ։ Կապիտալի այս ներթափանցումը գյուղ իրենք կապիտալիստները աշխատում էին քողարկել գյուղացիությանը օժանդակելու, նրանց վաշխառուներից և փիլևարներից (շարշի) փրկելու կեղծ հայտարարություններով։

Գյուղատնտեսական բանկը երկրի տարբեր մասերում ներկայումս ունի 32 ճյուղ և 28 գործակալություն։ 1949 թ. բանկի կապիտալը 460 միլիոն ռիալ էր, իսկ վարկերի ընդհանուր գումարը 391 միլիոն ռիալ։ 1950 թ. բանկի կապիտալը ավելացվեց 150 միլիոն ռիալով[1]։

Ռիզա շահի միապետության հաստատման առաջին տարիներին, գյուղատնտեսության ապրանքայնության աճմանը ուղեկցում էր երկրի առանձին շրջանների գյուղատնտեսական մասնագիտացումը։ Իհարկե այս կամ այն շուկայական պրոդուկտի կծով արտադրության մասնագիտացումը, գյուղատնտեսական մյուս կուլտուրաների արտադրության դադարեցում չէր նշանակում։ Իրանի կալվածատերերը, մշակելով բամբակ, ծխախոտ և այլ տեխնիկական կուլտուրաներ, շարունակում էին միաժամանակ մշակել ցորեն, գարի և այլն՝ տեղական կարիքների համար։ Հողագործական արդյունաբերությունը «մասնագիտանում է,— ինչպես նշում է Լենինը,— մի դեպքում շուկայական մեկ պրոդուկտի, մյուս դեպքում՝ շուկայական մի այլ պրոդուկտի արտադրության մեջ, ընդ որում գյուղատնտեսության մնացած կողմերը հարմարվում են այդ գլխավոր (այսինքն շուկայական) պրոդուկտին։ Այս պատճառով էլ առևտրային հողագործության ձևերն աչքի են ընկնում հսկայական բազմազանությամբ՝ ձևափոխվելով ոչ միայն տարբեր ռայոններում, այլև տարբեր տնտեսությունների մեջ»[2]։

Գյուղատնտեսության մասնագիտացումը առաջ էր բերում ապրանքափոխանակություն տարբեր շրջանների և տարբեր հողագործական տնտեսությունների միջև։ Բայց այդ բանից միայն կալվածատերերը և կուլակներն էին կարողանում օգտվել և ավելացնել իրենց եկամուտը։ Անմիջական արտադրողը, որը մեծ մասամբ վաստորեն կտրված էր առևտրական կենտրոններից և շուկայի հետ կապված էր վաշխառուների-մեծաղնորդների միջոցով, ոչ մի օգուտ չէր ստանում։ Գյուղացիները մշակում էին տեխնիկական կուլտուրաներ՝ ելնելով այն բանից, որ կալվածատերերը և վաշխառու-մեծաղնորդները ռենտայի կամ պարտքի դիմաց հրաժարվում էին ընդունել ուրիշ կուլտուրաներ։

30-ական թվականների իրանական մամուլի էջերում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի հոդվածների, որոնք կոչ էին անում տեխնիկական կուլտուրաներ մշակել և նշում նրա շահավետությունը։ Օրինակ՝ «Իրան» պաշտոնական թերթը, խոսելով Մազանդարանում նոր կուլտուրաներ ցանելու անհրաժեշտության մասին, 1932 թ. գրում էր «...Մազանդարանում գյուղատնտեսական կուլտուրաներից մշակվում է գլխավորապես բրինձ, չնայած, որ այդ կուլտուրայի մշակումը կապված է մեծ ջանքերի հետ և գյուղացիները մալարիայով փչացնում են իրենց առողջությունը և համարյա ոչ մի օգուտ չեն ստանում։ Համեմատական տվյալները ցույց են տալիս, որ բրինձով ցանված յուրաքանչյուր ջարիբից միջին թվով 20 խարվար բերք է ստացվում, որի տր-

[1] «Middle East Journal», 1951, № 2, էջ 191։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 386—87։

ժերը կազմում է 80 թուման, մինչդեռ բամբակով ցանված յուրաքանչյուր ջարիբից ստացվում է 6 խարվար բամբակ՝ 258 թուման արժեքով[1]։

Այսպիսով՝ Մազանդարանում, Իսֆահանում և երկրի մյուս շրջաններում կալվածատերերը և կուլակները սկսեցին ստիպել գյուղացիներին անցնելու տեխնիկական կուլտուրաների մշակմանը, որը երեք-չորս անդամ ավելի եկամտաբեր էր։

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր կուլտուրաների գծով ցանքատարածությունների բաշխման գործում նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան։ Մի շարք պետությունների հետ առևտրական կապերի թուլացումը և որոշ դեպքերում խզումը, հացի պահանջի աճը և օտարերկրյա բանակների երկրում գտնվելու և այլ պատճառների հետևանքով հացահատիկային գների բարձրացումը նպաստեց հացահատիկային ցանքատարածությունների ընդլայնմանը՝ ի հաշիվ տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունների, հատկապես բամբակի ցանքատարածության։ Միավորված Ազգերի Կազմակերպության գյուղատնտեսության և սննդամթերքի մասնագետներից՝ դոկտոր Դեյվիսը 1954 թ. հայտարարեց՝, որ բամբակի արտադրությունը Իրանում 1939 և 1940 թթ. տարեկան հասել էր մինչև 42 հազար տոննայի։ Պատերազմի տարիներին նշանակալի չափով այդ քանակը պակասեց, իսկ 1947 թ. սկսած նորից սկսեց աճել։ 1950 և 1951 թթ. բամբակացան էր կատարվել 130 հազար հեկտար տարածության վրա, որի արդյունքը եղավ 28 հազար տոննա. այս թվերը հետագայում աճեցին և 1953—54 թթ. համապատասխանորեն կազմեցին 210 հազար հեկտար և 45 հազար տոննա, որով գերազանցվեց նախապատերազմյան շրջանի արտադրանքի քանակը։

Հետաքրքրական է այն, որ ըստ նույն աղբյուրների՝ 1949 և 1950 թթ. բամբակի սպառումը երկրի ներսում կազմում էր ընդամենը 13 հազար տոննա, որը 1951 թ. իջավ մինչև 10 հազար տոննայի։ Նշանակում է Իրանի բամբակի արտադրանքի հիմնական մասը դուրս է գալիս արտաքին շուկա։ Սա ևս մի ակնհայտ փաստ է, որ օտարերկրյա իմպերիալիզմը Իրանը լիովին վերածում է իր հումքի բազայի։

Իսկ ինչպի՞սին էր Իրանում գյուղատնտեսության մասնագիտացման բնույթը։

Գյուղատնտեսության մասնագիտացումը Իրանում չհանդիսացավ երկրի տնտեսական օրգանիզմի օրինաչափական, պատմական զարգացման արդյունքը։ Նա չէր գտնվում անխզելի կապերի մեջ արդյունաբերության զարգացման հետ, չէր նախատեսում արդյունաբերության զարգացումը և չէր պայմանավորվում երկրում կապիտալիզմի զարգացումով։ Գյուղատնտեսության մասնագիտացումը զարգանում էր երկրի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանքով և օտարերկրյա կապիտալը այս հարցում ևս իրեն էր ենթարկում Իրանի տնտեսական զարգացման ընթացքը։

---

[1] «ایران», 6 մարտի, 1932։

[2] «اطلاعات», 20 հունվարի, 1954։

* * *

Ապրանքա-դրամային հարաբերությունների և առևտրական հողատիրության զարգացման հետ միասին, Իրանում տեղի է ունենում արտադրական միջոցների, առաջին հերթին հողի, ինչպես և դրամական կապիտալի, սերմացուի, անասունների և աշխատանքային գործիքների կուտակումը փոքրամասնության՝ կալվածատերերի, վաշխառուների և կուլակների ձեռքում և գյուղացիական տնտեսությունների մեծ մասի էքսպրոպրիացիան։ Առևտրական հողագործությունը սրեց մանր ապրանք արտադրողների՝ գյուղացիների և տեղական կալվածատերերի միջև եղած հակասությունները, ուժեղացրեց գյուղացիների շերտավորումը և մրցակցությունը։ Ինչպես ցույց է տալիս Վ. Ի. Լենինը, ներքին շուկան «... ծավալվում է, երբ ապրանքային տնտեսությունը պրոդուկտներից բանվորական ուժի վրա է փոխանցվում, և միայն այս վերջինի ապրանք դառնալու չափով կապիտալիզմն ընդգրկում է երկրի ամբողջ արտադրությունը...»[1]։

Իրանի գյուղացիության գույքային շերտավորումը և գյուղական բնակչության լայն մասսաների արտադրական միջոցներից, առաջին հերթին հողից զրկվելը հատկապես արագացավ երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաընթացքում և նրանից հետո։

Խոսելով գյուղացիության շերտավորման մասին Վ. Ի. Լենինը գրում է. «Անկասկած է, որ գույքային անհավասարության առաջացումն ամբողջ պրոցեսի ելակետն է հանդիսանում, բայց պրոցեսը (քայքայումը — Հ. Ե.) միայն այս «դիֆերենցիացիայով» երբեք չի սպառվում։ Հին գյուղացիությունը ոչ միայն «դիֆերենցիացիայի է ենթարկվում», նա բոլորովին ավերվում է, դադարում է գոյություն ունենալուց, դուրս մղվելով գյուղական բնակչության միանգամայն նոր տիպերի կողմից,— այն տիպերի, որոնք գերիշխող ապրանքային տնտեսություն և կապիտալիստական արտադրություն ունեցող հասարակության բուրժուան են հանդիսանում։ Այս տիպերն են՝ գյուղական բուրժուազիան (կերպանցորեն մանր) և գյուղական պրոլետարիատը, հողագործության մեջ ապրանք արտադրողների դասակարգը և գյուղատնտեսական վարձու բանվորների դասակարգը»[2]։

Ելնելով լենինյան այս բնորոշումից, տեսնենք Իրանում գյուղացիության վերին շերտը վերածվում է՞ր արդյոք գյուղական բուրժուազիայի, իսկ ստորին շերտը գյուղական բանվորների։

Դասակարգային շերտավորումը իրանական գյուղում հատկապես վառ կերպով արտահայտվում է այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Գիլանն ու Ադրբեջանը, որտեղ գյուղատնտեսությունը վաղուց արդեն վերակարգավորվել է շուկայական հարաբերությունների հիման վրա։ Այստեղ գյուղացիական մասսաների պաուպերիզացիայի հետ միաժամանակ, մենք տեսնում ենք կուլակային վերնախավի առաջ գալը, որը հիմնականում զբաղվում է սուբարենդայով, արտադրանքի գյուղացու բաժնի գնումով, վաշխառությամբ և առևտրով։ Հաճախ էլ այդ կուլակային վերնախավից կազմվում են խորդեմալիքներ և տճում, դառնում են մանր կալվածատերեր։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 66։
[2] Նույն տեղում, էջ 201—222։

Խորդեմալիք հասկացողության մեջ Իրանում որոշ շփոթություն կա։ Նախ և առաջ խորդեմալիք է կոչվում որևէ փոքր հողամաս ունեցող կալվածատերը, ինչպես, օրինակ, մի տեղում կուտակված բազմաթիվ գյուղերից մի գյուղի տերը, կամ ժառանգության բաժանման հետևանքով որևէ հողամասի տերը։ Այնուհետև խորդեմալիք է կոչվում որևէ հողամաս գնած հողատերը, թեկուզ առևտրական, մոլլա, արհեստավոր, զինվորական կամ պետական ծառայող։ Հետո, խորդեմալիք է կոչվում նաև հարուստ գյուղացին, ինչ որ «բոնդար» (بندار) կամ կուլակ, որը կալվածատիրոջից իր մշակած հողը գնել է, կամ թե բացի արենդով վերցրած հողից, գնել է նաև մի կտոր հողամաս։ Վերջապես՝ խորդեմալիք է նաև մի փոքր հողամաս ունեցող գյուղացին, որը իր հողը մշակելով հազիվ իր ապրուստն է հայթայթում։

Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս խորդեմալիքային գյուղերը շերտավորման են ենթարկվում և չքավորների խավը այդ գյուղերում ավելի քիչ չէ քան կալվածատիրական գյուղերում։ Խորդեմալիք-գյուղացիները գնալով քայքայվում և չքավոր գյուղացիներ են դառնում։ Այդ մասին մինչև իսկ նշվում է իրանական պաշտոնական դասագրքերում։ Օրինակ՝ Մ. Քեյհանի «Իրանի ընդարձակ աշխարհագրության» երրորդ հատորում՝ տնտեսական աշխարհագրության մեջ ասվում է, որ «Իրանի որոշ մասերում գոյություն ունեն խորդեմալիքներ, բայց նրանք աստիճանաբար ոչնչանում են և իրենց հողերը վաճառելով հասարակ ռայաթներ և խոշնշին[1] են դառնում... Երբեմն անկարող լինելով իրենց ապրուստը բավարարել, ստիպված իրենց հողը և գույքը բարձր տոկոսով գրավ են դնում և աստիճանաբար հողը իրենց ձեռքից դուրս է գալիս»[2]։ Գյուղացիական խորդեմալիքային հողերը կազմում են ամբողջ երկրի վարելահողերի 4—5 տոկոսը, չնայած որոշ շրջաններում նրանց տեսակարար կշիռը ավելի բարձր է։ Օրինակ Գորգանի հինգ շրջաններում՝ Մինուդաշտում, Բանդարգազում, Քուրթալայում, Գորգանում և Ալիաբադում հողատեր գյուղացիների ձեռքում է գտնվում 12 հազար հեկտար տարածություն, կամ այդ շրջանի վարելահողերի 18 տոկոսը։ Բայց տոկոսային այս բարձր ցուցանիշը շատ բացառիկ դեպք է։

Խոշոր կալվածատերերի կողմից մանր հողատեր գյուղացիների շահագործումը և նրանց նկատմամբ ցուցաբերված ճնշումներն ու բռնությունները անասելի և ահռելի չափեր են ընդունում։ «Բեսույե Այենդե» թերթը գրում է, որ խոշոր կալվածատերերը ամեն տեսակի մեքենայություններ են դիմում մանր հողատերերի հողերին տիրանալու համար։ Պատահում են դեպքեր, որ խոշոր կալվածատերերը, պետական պաշտոնյաներին կաշառելով, մանր հողամասեր ունեցող մարդկանց հողերը իրենց անունով են գրանցում, և երբ տերերը տեղեկանում են ու գանգատվում, ապա դատարանը բնականաբար խնդիրը վճռում է հօգուտ խոշոր կալվածատերերի։ Երբեմն կալվածատերերը ջուրը կտրելով, կամ կանաթները չնորոգելով, մանր հողատերերին երաշտի են դատապարտում և այդպիսով ստիպում են իրենց հողերը էժան գնով վաճառել[3]։

«Շոջաաթ» թերթը գրում է, որ Իսֆահանի Ջանեղան գյուղում գյուղացիների հիշողության մեջ դեռևս թարմ է, թե ինչպես խոշոր կալվածատերեր Սամսամը

---

[1] Իրանում Խոշնշին են կոչվում այն մարդիկ, որոնք ապրելով գյուղում, արտադրամիջոցներից զուրկ են և հաճախ էլ գաղարում են գյուղատնտեսությամբ զբաղվելուց։

[2] مسعود کیهان جغرافیای مفصل ایران قسمت ۳ اقتصادی, էջ 80։

[3] «بسوی آینده», 13 փետրվարի, 1933։

և Սարեմ օլ-Դոլեն կանչելով 30 մանր հողատերերի ստիպում են նրանց հրաժարվել իրենց հողերից։ Հողատերերը դիմադրում են, իսկ խանը իր գինված մարդկանց հրամայում է գյուղացիներին լցնել մառանը և ծխախեղդ անելով՝ ստիպել տեղի տալ։ Հողատերերը չեն ենթարկվում, իսկ խանը հրամայում է ծուխը ավելացնել։ Գյուղացիները խեղդվում են։ Իսկ խանը կեղծ նվիրատվության փաստաթղթեր է սարքում և խեղդամահ արված գյուղացիների մատներով կնքելով դրանք, վավերացման համար ուղարկում է Ղոմի հոգևորականներին[1]։

Իրանական գյուղում գոյություն ունեցող գյուղացիական շերտերը դասակարգային հետևյալ բնութագիրն ունեն։ Նախ՝ գյուղացի վարձակալների, ինչպես և գյուղացի հողատերերի մի մասից, որոնք ունեն իրենց անասունները, գյուղատնտեսական գործիքները և ջուր, կազմվում է գյուղի կուլակային վերնախավը։ Մինչկապիտալիստական սիստեմի տնտեսության կուլակի ամենարնորոշ գծերից մեկն հանդիսանում է այն, որ նա տիրելով հողին, միաժամանակ հող է վարձակալում կալվածատիրոջից և իր հերթին վարձով է տալիս չքավոր գյուղացուն սուրբենդայի պայմաններով։ Այդպիսով՝ իրենից հող վարձակալած գյուղացու նկատմամբ նա հանդես է գալիս որպես ձեռնարկող կամ հողի սեփականատերը, այսինքն՝ արտադրության միջոցների տերը։ Սուրբենդայի պայմանները ավելի ծանր են լինում, քան անմիջականորեն կալվածատիրոջից վերցված արենդը։ Սովորաբար կալվածատերը խուսափում է իր հողը պատահական չքավորին վարձով տալուց, վախենալով զրկվել վարձավճարից։ Կուլակը գյուղում զբաղվում է ոչ միայն սուրբենդայով, նա հաճախ կրպակ է պահում, և բերքը հավաքելու ժամանակ ամեն կողմից նրա մոտ է կուտակվում նշանակալից քանակությամբ պրոդուկցիա՝ պարտքերի դիմաց։ Կուլակն ունենում է նաև մի քանի ձի, կով, ոչխար և այլն։ Թե՛ իր հողը և թե՛ վարձակալած հողը նա մշակում է իր անասուններով, գործիքներով և սերմով. այնպես, որ կուլակը վճարում է միայն հողի և ջրի համար, երբեմն էլ միայն հողի համար։

Ինչ վերաբերում է կուլակի կամ մանր կալվածատիրոջ կողմից հող վարձակալելուն, ապա այստեղ ինչպես ցույց է տալիս Վ. Ի. Լենինը, խոսելով Ռուսաստանի մասին, գոյություն ունեն արդեն կապիտալիստական ռենտայի էլեմենտներ։ «Գյուղացիական բուրժուազիայի կողմից վարձակալությունն իր ձևերը հավաքելն ակնառու ապացուցում է, որ «գյուղացիական վարձակալությունն» արդյունաբերական բնույթ է կրում (հողի գնում՝ պրոդուկտի վաճառքի համար)։ Այս ասելով, սակայն, մենք ամենևին չենք ժխտում կարիքից վարձակալելու փաստը։ ...Գյուղացի էլ կա, գյուղացի էլ»[2]։

Անցյալներում, երբ կալվածատերերը հող էին վարձակալում ուրիշ ավելի խոշոր կալվածատերերից, այդ միջնորդային վարձակալությունը հանդես էր գալիս սովորաբար որպես մինչկապիտալիստական վարձակալություն և ներկայացնում էր ֆեոդալական ռենտայի բաժանումը պարզագույն ռենտա ստացողների միջև։ Բայց կապիտալիստական հարաբերությունների զարգացումով միջնորդային վարձակալությունը դառնում է, որոշ դեպքերում, տնտեսության անցումային սիստեմի ձևերից մեկը, որը իր մեջ է միացնում թե՛ ֆեոդալական և թե՛ կապիտալիստական սիստեմների գծերը։

[1] «شجاعت», 30 հուլիսի, 1933։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 153—154։

Վարձակալ միջնորդները մեծ շահեր են ստանում վարձակալված հողից, մի շահ, որը ստացվում է եկամտի և ռենտայի տարբերությունից, այն ռենտայի, որը նրանք վճարում են հողատիրոջը։ Որպես կանոն, վարիը նրանք վճարում են դրամով։ Ըստ որում, ինչքան շատ է վարձակալված հողը, այնքան ցածր է վարձավճարը։

Գյուղացիական մյուս շերտը միջակ գյուղացիներն են, որոնք ունեն ավելի քիչ հող, քան կուլակը, կամ վարձակալում են ավելի քիչ հող, բայց սովորաբար ունեն անասուններ։ Շուկայական իրադրությունների փոփոխումը, անբերրի տարին, երաշտը, կամ որևէ այլ տարերային աղետ, նույնպես և հարկը, ռենտան կամ պարտքը ժամկետին չվճարելը խախտում է այդպիսի գյուղացիական տնտեսությունների անհուսալի «կայունությունը» և միջակների նշանակալի մասին տանում է չքավորների շարքերը։ Ցարական Ռուսաստանի միջակ միջնաշերտի մասին Վ. Ի. Լենինի տված բնութագիրը նշանակալից չափով կիրառելի է նաև Իրանի միջակ գյուղացիության նկատմամբ։

Վերջապես, գյուղացի-վարձակալների հոծ մասսան, որն Իրանի գյուղացիության գերակշռող մեծամասնությունն է կազմում։ Այդ գյուղացիները չունեն իրենց անասունները և կալվածատերերից վերցնում են հողից և ջրից բացի նաև անասուններ, կամ անասունների մի մասը, հողագործական գործիքներ և սերմացու, որոնց դիմաց կալվածատիրոջը տալիս են բերքի մոտ 80 տոկոսը։ Իրանական գյուղում գյուղատնտեսության դեկրադացիայի և գյուղացիական հիմնական մասսաների քայքայման պրոցեսում չքավոր գյուղացիների խավը վերածվում է կենտրոնական ֆիգուրայի։ Իրանի համար սպեցիֆիկ է այն, որ գյուղացիության մեջ հիմնական ֆիգուրան դառնում է հողազուրկ գյուղացին, բայց ոչ թե գյուղացի-գյուղատնտեսական բանվորը, այլ գյուղացի-վարձակալը։ Հենց գյուղացիական այս հոծ մասսաների շարքերից է դուրս գալիս այն ազատ վարձու բանվորական ուժը, որն անհրաժեշտ է Իրանի արդյունաբերության զարգացման համար։ Չքավոր գյուղացիների հսկայական խմբեր կամ լքելով իրենց տները, մեկընդմիշտ գնում են դեպի քաղաքները ապրուստի որևէ միջոց գտնելու, կամ տարվա միայն մի մասը, այսինքն ձմռանը, գնում են քաղաք աշխատանք որոնելու, մի հանգամանք, որը լայն տարածում է գտել Իրանում։

Գյուղատնտեսության մեջ բատրակների, կամ գյուղատնտեսական բանվորների աշխատուժի օգտագործումը ընդհանրապես վերցրած Իրանում տարածված չէ։ Բայց կան որոշ շրջաններ, որտեղ տեխնիկական կուլտուրաների մշակման գործում կալվածատերերը օգտագործում են բատրակների։ Օրինակ՝ Լահիջանում մոտավորապես 3400 հեկտար տարածություն թեյ է ցանվում։ Թեյը կամ մշակում են իրենք կալվածատերերը՝ օգտագործելով օրավարձ բատրակների կամ էլ ամբողջ տնտեսությունը վարձով են տալիս ինչ որ երրորդ անձնավորության։ Այս դեպքում ամեն մի հեկտարի դիմաց նրանք ստանում են 230—260 կգ չոր թեյ։ Իրանական «Շահրազ» թերթը գրում է, որ թեյի պլանտացիաներում «գարնանը ու ամռանը օրական ավելի քան ութ հազար բանվորուհիներ են աշխատում։ Օրական ավելի քան 14 ժամ աշխատանքի դիմաց նրանք առավելագույն ստանում են 15 ռիալ, փոքր երեխաները՝ 10 ռիալ։ Չինական սորտի թեյի պլանտացիաներում աշխատող բանվորների վարյագ շահագործումը աննախատես է։ Բանվորների աշխատուժից առավելագույն օգուտը քաղելու նպատակով, կալվածատերերը թեյի հավաքը կապալով են տալիս՝

յուրաքանչյուր կգ թաց տերևի դիմաց 2 ռիալ վարձ վճարելով։ Լահիջանի թեյի ֆաբրիկաներում ամեն մի կգ թաց թեյի գինը միջին հաշվով 13 ռիալ է, այսինքն՝ կալվածատերը ամեն մի կգ թեյից մյուս ծախսերը դուրս գալուց հետո 6 ռիալ օգուտ է քաղում։ Եթե ամեն մի բանվոր միջին հաշվով օրական տասը կգ թեյ հավաքելով, քսան ռիալ վարձ է ստանում, ապա այգետերը այդ տասը կգ վաճառում է 130 ռիալ և առնվազը 60 ռիալ մարուր օգուտ շահում»[1]։

Այս տվյալները ցույց են տալիս թե ինչպիսի խոշոր եկամուտներ են ստանում Գիլանի կալվածատերերը բատրակների շահագործումից։ Օրինակ՝ Իրանական քաղաքական գործիչ տխրահռչակ Կավամ-էս-Սալթանեն, որին պատկանում էր Լահիջանի թեյի պլանտացիաների մեծ մասը, 1946 թ. միայն Գիլանի իր կալվածքներից մեկ միլիոն 800 հազար ռիալ եկամուտ է ունեցել։

Գյուղացիական մասսաների դեպի քաղաքները գնալու, և նրանց թշվառ վիճակի մասին կան բազմաթիվ փաստեր։ «Իրանական գյուղացու միջին եկամուտը,— գրում է անգլիական ժուռնալը,— կազմում է մոտ 110 դոլար տարեկան, իսկ անբերրի տարիներին, ինչպես 1948 և 1949 թթ. գյուղական բնակչության աղքատությունը դառնում է անտանելի։ Այդ տարիներին ամբողջ գյուղեր ամայացան, քանի որ բնակիչները, առաջիկա տարվա համար պահված իրենց սերմացուն և անասունները ուտելուց հետո, լքեցին գյուղերը և գնացին քաղաքներ ապրուստի որևէ միջոց գտնելու համար»[2]։ «Բեսույէ Այենդե» թերթը տպագրելով ցնցոտիների մեջ գյուղացիների նկարը, գրում է, «Իսֆահանի գյուղացին մի ամբողջ կյանք չարչարանքից և տառապանքից հետո, այսօր Իսֆահանի փողոցներում անգործ թրև է գալիս, իսկ նրանք, որոնք նրա աշխատանքը թալանելով միլիոններ են դիզել, ցոփ կյանք են վարում»[3]։

Իրանի ամենահարուստ նահանգներից մեկում՝ Ադրբեջանում գյուղացիության թշվառ վիճակը աներևակայելի չափերի է հասնում։ Ամերիկյան «Նյու-Յորք-Թայմս» թերթի թղթակիցը Թեհրանից գրում է, որ իրանական Ադրբեջանում տիրում է աղքատություն, ճնշում և ժողովրդական մասսաների դժգոհություն։ «Տասնյակ հազարավոր գյուղացիներ փախչում են գյուղերից։ Այստեղ ստացված տեղեկություններից մեկում նշվում է, որ Արդաբիլի, Մարաղայի, Արասբարանի շրջաններում 50 հազար գյուղացիներ թողնելով հողը, գնացել են դեպի քաղաքները։ Թեհրանի փողոցներում հաճախ կարելի է հանդիպել ադրբեջանցի մուրացկանների»[4]։ Իսկ ադրբեջանական «Ազերպադեգան» թերթը 1949 թ. գրում էր, որ «գյուղացիության դրությունը արտակարգ վատ է, ամբողջ Ադրբեջանը ընդգրկվել է թշվառության և դժբախտության մեջ։ ...Ամեն օր և ամեն ժամ գյուղերից քաղաք (Թավրիզ) են գալիս աղքատների, մերկերի, սովածների և հիվանդների խմբեր, բաղկացած տղամարդկանցից, կանանցից, երեխաներից և երիտասարդությունից, որոնք աճեցնում են առանց այդ էլ մեծ, աշխատազուրկների և շրջմոլիկների թիվը»[5]։

1950 թ. իրանական մինիստր Հեքմաթը հայտարարեց, որ Ադրբեջանում ավելի քան 120 հազար գյուղացիներ ստիպված լքել են հողը և ապրում են քա-

[1] «جهان», 10 հուլիսի, 1953։
[2] «Current History», 1952 May, № 129, էջ 275։
[3] «بسوی ایندہ», 21 հունվարի, 1953։
[4] «Правда», 17 февраля, 1950.
[5] Правда об Иранском Азербайджане, Баку, 1949, стр. 4.

ղաքներում, ամենաողորմելի պայմաններում[1]։ Իսկ ինչ էին անում նրանք քաղաքներում։ Իտալական կոմունիստական «Ունիտա» թերթի հատուկ թղթակիցը գրում է, «Ես ի վիճակի չեմ նկարագրելու այդ որջերը, որտեղ նրանք ապրում են. մինչև իսկ դերեզմանատունը ավելի ուրախ տեսարան է ներկայացնում, քան այդ նեխվող աղբի կույտերը, որոնց մեջ վխտում են երեխաները։ Ինչքան իրանական ադրբեջանցիներ, ուժեղ և ամուր գյուղացիներ, սովից մահացան այս տարիների ընթացքում։ Նրանք ամբողջ ընտանիքներով թափառում էին փողոցներում և մուրացկանություն անում։ Հետո նրանցից որևէ մեկը ընկնում էր գետին—մահ սովից—և հարազատները լռակյաց տանում էին նրան»[2]։

Նույն պատկերը դիտվում է նաև Իրանի մյուս նահանգներում՝ Քիրմանում, Խորասանում և այլ վայրերում։ Օրինակ՝ ժողովրդական պարտիայի օրգան «Մարդոմե Ադինե» թերթը գրում է, որ Իսֆահանի շրջանի գյուղացիների 30 տոկոսը սովի և կալվածատերերի ճնշումների հետևանքով իրենց գյուղերից փախել են»[3]։

Հետպատերազմյան տարիներին հատկապես հաճախակի են դառնում այն դեպքերը, երբ մանր հողամասեր ունեցող գյուղացիները ստիպված են լինում, իրենց հողամասերը լքելով, մասսայաբար թափվել քաղաքները, ապրուստի միջոցներ հայթայթելու համար[4]։ 1946—48 թթ. Ջուշագանից հեռացան 312 մարդ։ Նույնպիսի փախուստներ եղան Թարգից, Բիդհանգից։ Աբինեյից 700 ընտանիքից 200-ը հեռացան դեպի քաղաքներ։ Իրանական մամուլում բազմաթիվ այդպիսի փաստերի կարելի է հանդիպել։ Օրինակ՝ իրանական «Շահբազ» թերթը գրում է, «Քիրմանի խորդեմալիքները զարմանալի արագությամբ դեպի սնանկացում և ոչնչացում են գնում։ Խոշոր կալվածատերերը ժանդարմերիայի օգնությամբ, կամ արհեստական սով ստեղծելով միջակներին ստիպում են, որ իրենց հողերը կալվածատերերի տրամադրության տակ դնելով, միանան ընչազուրկ գյուղացիների կամ քաղաքի և գյուղի գործազուրկների հսկայական բանակին»[5]։

Այսպիսով, օտարերկրյա իմպերիալիզմի ներգործման և ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների գերիշխանության հետևանքով, ինչքան էլ դանդաղ գոհհիկ տեղի ունենար կապիտալիզմի զարգացումը Իրանում, նա անխուսափելիորեն ուղեկցվում էր աշխատանքային շուկայի առաջ գալով, ավելի պակաս զարգացած շրջանների բնակչության հեռացումով դեպի ավելի զարգացած շրջանները, գյուղից դեպի քաղաքը։ Իրանի բանվորության կապիտալիստական շահագործման հիմնական առանձնահատկությունը հանդիսանում է այն հանգամանքը, որ բանվորական ուժը վաճառվում է իր արժեքից շատ ավելի ցածր գնով։ Դա իր հերթին պայմաններ է ստեղծում կապիտալիստական շահագործման միացման ու զուգակցմանը կիսաֆեոդալական շահագործման բազմազան ձևերի հետ։

---

[1] «New York Times», 28 февраля, 1950.

[2] *М. Мачокки,* Иран в борьбе, Москва, 1953, стр. 115. Այդ մասին տվյալներ կան նաև «Փարս տարեգրքի» (1948—49) թվականի մեջ, էջ 65։ ۱۹٤۸—٤۹ «سالنامه پارس»։

[3] «[illegible]», 3 ապրիլի, 1948:

[4] Այս երևույթը գեղարվեստորեն հաջող կերպով պատկերված է ադրբեջանական սովետական գրող Միրզա Իբրահիմովի «Կգա օրը» վեպի մեջ։

[5] «[illegible]», 30 ապրիլի, 1953։